քիր կազմելու համար։ 2) Անասուններ զոհանալը արգելվում է. անասուն զոհացողը պէտք է վերադարձնէ նրան տիրոջը և մարմնական պատժի ենթարկվի։ 3) Մարդասպանը մահուան պատժի է ենթարկվում։ Այդ օրէնքները կատարելու համար ներքին պահապան զօրքեր են հաւաքվում։

Թէսսալոնիկից ստացված լուրերը չափազանց անհանգստացնող են։ Թէ քաղաքի և թէ նրա շրջակաների մէջ քրիստոնեայ բնակիչների վիճակը տխուր և անտանելի է։ Այրանցիների առաջնորդ Սամանոբէյ սարասփելի կերպով հալածում է քրիստոնեաներին, իսկ Թիւրքաց կառավարութիւնը ուշադրութիւն չը դարձնելով այդ մարդու գազանութիւնների վրա, ինքն էլ զրգռում է մահմեդական բնակիչներին քրիստոնեաների դէմ։ Քրիստոնեաների ամենօրեայ սպանութիւնները և նրանց կրած տանջանքները ստիպեցին նրանց դիմել Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Աւստրիայի և Իտալիայի հիւպատոսներին և խնդրել այդ պետութիւնների օգնութիւնը։ Մի՞թէ Եւրոպան սառնասրտութեամբ կը համբերի, որ հպարտաբար քրիստոնեաներ զոհվին մահմեդականների ֆանատիզմութեանը և սրին։

ԵՒՐՈՊԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

—

«Polit. Corresp.» լրագրի դիպլոմատական թղթակիցը գրում է Փարիզից հետևեալը յուլիսի 13-ից։

Եւրոպական քաղաքական գործերի դրութիւնը հեռագիտ ծանր բնաւորութիւն է ստանում։ Կարելի է նշանաւոր անցքերի սպասել, եթէ այդ դրութիւնը աւելի հանգստացնող բնաւորութիւն չը ստանայ։ Այդ նպատակին հասնելու համար պետութիւններից բարեմտութիւն և զգուշութիւն է պահանջվում Եւրոպայի վիճակը կատարելու ժամանակ Թիւրքիայի վերաբերութեամբ։ Կարելի է յուսալ, որ պետութիւններ մէջ համաձայնութիւն կը կայանայ, որպէս զի Եւրոպական նոր դժուարութիւններ չը ծագեն։ Առժամանակ Եւրոպայում երկու ընծայք է նկատվում։ մի քանի կառավարութիւններ կամենալով ցանկանում են ազդող քաղաքականութեանը հետևել Թիւրքիայի վերաբերութեամբ։ Դրանք անգլիական, ռուսաց և գուցէ գերմանական կառավարութիւններն են։ Միւս պետութիւնները աւելի լաւ են համարում Թիւրքիայի վերաբերութեամբ պահպանողական քաղաքականութեանը հետևել։ Այս վերջին արմատաբերութիւնը տիրապետում է Փարիզի և Վիենայի մէջ։ Պետութիւնները սկսում են համաձայնութիւն կայացնել, որովհետև բոլորի շահերն էլ պահանջում են խաղաղութիւն պահպանել։ Մի՞թէ հելլենական ֆանատիզմի պատճառով Արևելքը նշանաւոր անցքերի ասպարէզ պէտք է դառնայ։ Արևելքի բնակիչները պատրաստ են խեղդել միմեանց։ դրա համար նրանք միայն նշանի են սպասում։ Արդեօք Եւրոպան պէտք է տայ այդ նշանը։ Արդեօք նա չը պէտք է արիւնհեղութեան առաջն առնէ, կամ գոնեա սահմանափակել պատերազմական դաշտերի թիւը։ Պետութիւնների այս նպատակը և այն ինչ որ նորերումս պատահեց Ալբանոյի վերաբերութեամբ, շատ լաւ նշան է համարվում։ Անգլիան յայտնեց Թիւրքիային, որ Ալբանոյի հարցին պէտք է վերջ դնել։ Դրանից յետոյ Անգլիան առաջարկեց աւստրօ-ունգարական կառավարութեանը երկրորդ շաբաթ ժամանակվանից տալ Թիւրքիային Կորտիի գաղտագրութիւնը կատարելու համար։ Եթէ այս կամ այն պատճառով Կորտիի գաղտագրութիւնը չը կատարվի, Եւրոպան կը տարվի Թիւրքիային զրկել Դուլցինիոյ ծովային ցոյցերի օգնութեամբ։ Աւստրօ-ունգարական կառավարութիւնը առաջ մերժեց այդ առաջարկութիւնը, բայց յետոյ համաձայնեց ընդունել։ Ռուսաստանը նոյնպէս համաձայնութիւն տուեց, բայց այն պայմանով, որ ծովային ցոյցերի ժամանակ ոչ մի պետութիւն առաջ չը գնայ։ Դերմանիան լաւ վերաբերվեց այդ առաջարկութեանը, բայց հրաժարվեցաւ ուղարկել իր նաւերը։ Աւելի մեծ ընդդիմադրութիւն Իտալիան ցոյց տուեց, որ պահանջում էր անպատճառ իրագործել Կորտիի գաղտագրութիւնը։ Վերջապէս իտալական կառավարութիւնը համաձայնեց պետութիւնների հետ միասին գործել Դուլցինիոյ վերաբերութեամբ, եթէ Թիւրքիան հրաժարվի իրագործել Կորտիի գաղտագրութիւնը։ Այդ կարի վերաբերութեամբ կատարեալ համաձայնութիւն կայացաւ, որի մասին տեղեկութիւն ստանալուց յետոյ Թիւրքաց կառավարութիւնը եռանդով վերաբերվեց գործին։ Մինչև այժմ Թիւրքիան սպասում էր, թէ ինչ եռանդ կը ցոյց տայ Եւրոպան և արդեօք կը զիմէ նա ոյժին։ Եւրոպայի անհամաձայնութենից միշտ օգուտ քաղող Թիւրքերը կարծում էին, որ այս անգամ էլ այդ անհամաձայնութիւնը կը տիրէ և իրանք դարձեալ օգուտ կը քաղեն։ Բայց պետութիւնները համաձայն են գործում և Բ. Դուռը սկսում է զիջումներ անել։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 5 յունիսի

Սուլթաններու սերայը միշտ նոյնը կը մնայ։ Դա, սպանութիւն, յեղափոխութիւն հոն դրած են իրենց բոյնը։ Մարդ չը գիտեր ինչ ահեղի գործեր կը կատարվին այդ ոսկեայա տպարանքներուն մէջ, բայց երբեմն երբեմն գաղտնիք մը դուրս թափանցելով, մեզ ըմբռնել կուտայ ինչ կրնայ վնեալ կեանքը այդ Սուլթանին շուրջը։ Սերային բոլորտիքը պատերը բարձր են, Թիւրքիոյ էն քաջ զինուորները գիշեր ցորեկ կը հսկեն դուրսը, իսկ ներսը կրած սեակմ ծառայներու բանակ մը կայ որ կը հսկէ նոյնպէս։ Այս ամեն արգելոց պահպանութիւնն խուսափելով, կին մը սերայէն կը փախչի, կառք մը կը բռնէ վարձով, Անգլիոյ դեսպանատունը կը դիմէ, պ. Կոչէնի կը ներկայանայ, անգլիական դեսպանին պաշտպանութիւնը կը խնդրէ, որու դէմ, սուլթանին դէմ։ Գիրքի, զարմանալի բան, և հաւատալ դժուար կը թուի։ Եւ սակայն այս է իրողութիւնը։ Ինչ է պատահեր արդեօք Սերային մէջ, ինչ ոճիր գործուեր է ինչ դաւադրութիւն։ Դեռ չատ բան յայտնի չէ, բայց այս ճշմարիտ է թէ Սերային մէջ խումբ մը մարդիկ փորձ փորձելու վրայ էին ներկայ սուլթանը գահընկեց ընելու և իր տեղը Մուրատը նստեցնելու։ Կիներ ալ կային այդ դաւադրութեան մէջ, որ Սերային դուրս ունէր ելելու։ Այս տապալին անգամը չէ որ Մուրատը գահին վրայ բարձրացնելու փորձ եղաւ, թեպետ այս վեցերորդ եօթներորդ անգամն լինի։ Մինչև ցարդ կիները մեծ դեր չէին խաղած, այս հեղուն, կերևի թէ, մեծ դերն իրենց յանձնուած էր։ Վեց սուլթաններներ, բոլորն ալ տարեց, 30—40 տարեկան, Սերային մէջ գործելու պաշտօն ստանձնած էին։ Գաղտնիքն երբ իմացուեցաւ, բարձրագոյն հրաման կելլէ զանոնք իսկոյն խեղդամահ ընելու։ Վեց դատաւորներէն մին կը յանդի, հրաչքով մը պրծիլ իր դահիճներուն ձեռքէն և կը դիմէ Անգլիոյ դեսպանին։ Այս գերի եմ, կըսէ, Անգլիա պարտականութիւն յանձն առած է, իր կիրքն դատիցներով, ազատել ամեն գերի իր տիրոջ ձեռքէն։ Թիւրքիա թէև վերջերս գերեցաց ազատութեան համար դաշինք կռնց Անգլիոյ հետ, բայց ազատութիւն տալիսին չէ ուզած տալ ոչ-մի գերեալ աղջկանց և կանանց, որը Սերային մէջ, փարաներու ապարանքներու մէջ կը հիւծին ու կը մայրեն։ Եւ չերքեզ գերի մ'ևս, մանկութենէն իվեր Սերային մէջ փակուած, Անգլիոյ պաշտպանութիւնը կը խնդրեմ։ Պ. Կոչէն զիջը անգլիական կառավարութեան չորենաւոր կը դրէ, աւելի ազատասիրեան համար։ Բայց ոչ է թէ ամեն ոք, բացի ոճրագործներէ, ազատով ազատանարան կրնայ գտնել անգլիական չորենաւոր մը վրայ։ Այսպէսով սուլթանը։ Ամեն տեսակ բռնութիւնէ և հարուածէ գերի և ազատ կը մնայ։

Ամեն ոք կը հարցնայ թէ այս դէպքը չէր կրնար մեզ առանց ուրշ և աւելի ծանր հետևանքներ ունենալու։ Դեռ սուլթան Համիտ ինքն է, որ իր զայրոյթը կը թափէ կազմ Օսման փաշային վրայ զինչն իր նախարարութեան ատենանէն զրկելով։ Բէվիպայի զէշ զարն պաշտօնէներ Սերայը պահպանել և Սերային հետ իր տիրոջը անգնահատելի և թանգագին կեանքը։ Այս դէպքին մէջ չատ արհնութիւն չէ ցցուցած, մի յանցանք ոչա համար, զրոյց կայ թէ, Օսման փաշա նախարարական ատենանէ կորցնելէն իսկ ետ մինչև իսկ սպասք պիտի երթայ։ Շատ մարդիկ Օսման փաշայի անկումն իմանալով կարծեցին թէ այդ Եւրոպական դեսպանաց ճնշման արդիւնքն է և կամ մի նոր քաղաքականութեան նշանը։ Զեն գիտեր խնդիրը թէ օսմանեան պետութիւն ըսուած բանը երկրի մը կառավարութիւնը չէ, այլ միայն Սերային կառավարութիւնն է։ Թէ ինչպէս կը դառնան հոն. փախստական կինը, կըսեն թէ, քսան-նեցուցիչ յայտնութիւններ ըրեր է։ Իր ամենակարեր յայտնութիւնը բրիտանական դեսպանին համար սա է եղեր թէ Անգլիոյ դեսպանին կողմէ առ սուլթանն երբեմն երբեմն գրուած նամակները չատ անհաւատարիմ կերպով կը թարգմանուին և սուլթանն անոնց մեղմ և չողբորթիւնոր տեսնելով մեծ կարեորութիւն չէ տուած երբեք այդ նամակաց։ Պ. Կոչէն իր առաջին թարգման պ. Սանտոնէն բացատրութիւն կը խնդրէ, խուզարկութիւններ կը լինին և սա յերեան կելլէ որ պ. Սանդիսոն թէ ներկայ և թէ նախորդ դեսպանաց թէ խօսքերը և թէ գրութիւնները չատ տարբեր կերպիւ թարգմաներ է։ Խնդիրն ամենածանր է և չատ մը անհամաձայնութենից և չարեաց պատասխանատուութիւնը կը բեռցնին այժմ պ. Սանդիսոնի վրայ։ Անգլիոյ դեսպանն իր առաջին թարգմանը բանտարկած է և քիչ օրէն Լոնտրա պիտի զրկէ դատուելու համար։ Ամենաբիկ սուլթանուհի մը որ թերևս ամեն քաղաքական դժուարութեանց գաղտնիքը բացատրէ և պատճառ լինի որ Լոնտրայի դահլիճը մի նոր և աւելի արդիւնաւոր մեթոտ բռնէ իրագործականութիւնը Թիւրքիոյ մէջ յառաջ տանելու։

* * *

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 18/30 յունիսի 1880

Ինչպէս գիտէք վասպուրականի սոսկը դեռ ճարակում է Ամիրան չափ և աւելի վնասակար կերպով, վասն զի Թոզ թէ դեռ հացը հին գինն է, նոր գինիները աւելի չատ են. աւելցու ասոր վրայ տեսակ տեսակ տարափոխիկ հիւանդութիւններ, որով գրեթէ մի սպանդանոց է դարձել Հայկական մասնաւորապէս չարունակում է փոքր հուսալով և օգնել, սակայն ժողովուրդներնիս բոլորովին անհոգ է այդ մասին, մանաւանդ միջակ և հարուստ դասերը, որոց բոլորին ալ տաւածը համեմատութեամբ խիստ քիչ է (փոքրիկ բացառութիւնք) թող որ եղած անանկներ, որք մեծ վասնաւական ըլլալով միայն 10 բուրլ տալու չամաչեցին, սասնց ամենին պատճառը կարելի է համարել միայն այն, որ ոչինչ զգացում չունին և բնաւ ազգասիրութիւն։

Շնորհակալ ենք այս մասին մեր Ռուսաստանցի եղբայրներէ, որք մեզմէ աւելի քաջքով ալեսատեցան և կաշխատեն դեռ մեզմէ աւելի հեռու զբանուելով հանդերձ։

Սակայն ազէկ գիտնանք, որ դեռ մեծամեծ զուարներ հարկաւոր են բուժելու համար այն վիրքերը, զոր չատ մը նամակներ սկսան մեզ իմացնել թէ. «Հայրենիքիս մեծ վտանգի մէջ է»։ Հարկաւոր ենք մանաւանդ մեր խնդրութիւնէն այն գործունէութիւնն մասին, որով ազգին մեծ բարերարութիւններ ըրած է մինչ այսօր և չարունակում է դեռ, սակայն քանից կրկնապատկելու ժամանակն է։ Այսօրուան մեծ պէտքերնիս է որ հիւանդութիւն մեր քանի կարող բժիշկներ զրկուին Լուր առի որ տեղւոյս մասնաժողովը սկսած է կարգադրել զայս ալ, սակայն այս մասին տեղ աւելի դիւրութիւն և մշրոց ունիք և տեղւոյդ ազգասէր բժշկասէրաց ալ մեծ ասպարէզ մը է այս իւրանց ազգասիրութիւնը ցուցնելու։ Կը յուսամ որ թէ դուք և թէ հասարակութիւնդ արագէն զգոյշ էք այս պէտքը և կարգադրած. սակայն եթէ չէ, մեծ պէտք կայ այս մասին, վասնզի եթէ այդ տարափոխիկ սիրար տարածի, ինչպէս որ հաւանական է, դժուար կըլլայ առանձալ առանց մեծամեծ զրուներու, մանաւանդ Հայաստանի կողմերը ուր բնաւ ոչ բժիշկ մը անգամ չը կայ. անա վասպուրականի եղբարց պէտքը երկու եղաւ. զրամ և զրանիրուն բժիշկներ։

Եթէ ասենք չուտով չը մասնակարարուին, վտանգը թերևս սարափելի մեծնայ և այն ատեն անկարելի ըլլայ փրկել հարկնիքնիս. միով բանիւ «Հայաստանի ապագան և կացութիւնը մեծ վտանգի մէջ է»։ Կուզէի սոյն աւերող սոսկն չարժանիին ալ գրել, սակայն թէ չատ երկար է և թէ մուրի կէտերով չրնայատեալ, անգութ և վատ ձեռքերով գործուած... որը ձեզ յայտնի ըլլալու են։ Այժմ գրեթէ ուրիշ առարկայ չը կայ, այլ միայն սոսկն սասպուրիները, տեղւոյս մասնաւորապէս թէև չատ ուշ, սակայն երբեմն յոցուանները զբրեր։ ազգային գործերը դեռ մեծաւ մասամբ կախ կը մնան. այժմ քաղաքական կէտով մեր միտքը գրաւած է Գրիզիին գեսպանաժողովը. մանաւանդ տեղւոյս դեսպանաց հաւատարիս ծանուցագիրը, որոյ երկու կէտերուն պատասխանեց Բ. Դուռն, սակայն Հայաստանի վերաբերեալ կէտին վրայ դեռ կը խորհի, բայց անշուշտ է որ յուսացուցաց օգուտը տայ, եթէ մեք տարին հետ գոծոյ չըլլանք և չը միանանք և ժամանակէն օգուտ չը քաղենք, Սր. պարարաքը միշտ խուռն գործերով չրջապատեալ է. ասոնց որ հարատարութեանց լուրեր պակաս չեն, մանաւանդ Վասպուրականէն, ուր քուրդերը դեռ կատերեն անցեալի նման։ Ուրեմն աւելցուցէք սոսկն վրա այս ալ. ուրեմն ոչ կերթայ սասնկով Վասպուրականի դրութիւնը, եթէ մեծ ջանքեր չըլլան փրկելու։ Հայաստանի ժողովուրդը փորձ առած է և առաջ թէ ինչպէս պէտք է ինքզինքը պաշտպանել, այսօր քիչ մը կրնայ զորացարել, սակայն անգութ սոսկը դեռ իր հերձանեղովը կախկռնելու և ոչնչացնելու կախման է չուտով հեռանալու միայն չունին։

Այս մասին վեհ. Հայրապետի ցոյց տուած սառնասրտութիւնը մեծ վէրք պատճառած է մեր զժբաղդ եղբարց, վասն զի Հարկ էր որ նորին Վեհափառութեան հովանաւորութեանը ըլլար ամեն գործ, ամեն ճիգ չը խնայէր հարձնելաց այս ամենապատանի մասին ազատութեանը, առանց որոյ հարձնիքը պէտք է կորուսան նկատել. և արդեօք ունինք Հայաստանէն զատ յոյս մը, անիմանալի և անբուժելի խնդիր մը....

Լրագրոյդ 81-որդի թերթ մէջ կարդացի մի յօդուած «Կ. Պոլսի հայ մամուլը» վերնագրով, որոյ հեղինակը ամենայն իրաւամբ կապացուցանէ տեղւոյս հայոց լրագրաց սառնասրտութիւնը, որք ամենաձիշտ կերպով ոչինչ հետաքրքրութիւն չեն հեռու տեղեր բնակող հայերու մասին և ըլլալու ալ հոգս չունին, այլ միայն գիրար բզկտել, մանաւորապէս ծառայել, կամ քաղաքական յօդուածներ գրել։ իսկ դուք այս և ամեն ազգաչէն կէտերով ալ մեզ գրեք բանաձ է և չարունակեցէք, և ամեն կերպով իրաւունք ունիք մեծ հանգարութիւն վարելել ազգէն, ինչպէս որ վարեցուած էք։

Մի առաջարկութիւն ալ պատ. մեծամուն հեղինակ «Բաֆֆիին» իր բանաստեղծական «Խոնարհ» մասին, այն է որ առանց դադարեցնելու լրագրոյդ մէջ, չարունակէ, սակայն առանց ժամանակի կորստեան մի պատմութիւն կազմէ և չուտով տպել տայ, որ լաւ ընդունելութիւն պիտի գտնէ, ինչպէս ուրիշ գործերը և մեծ փայլ պիտի տայ հայի պատմութեան։ Նամակս գոցելու ժամանակս լսեցի որ Բերլինի դեսպանաժողովը յունաց օգտակար կերպիւ գծեր է սահմանագիծը, որ արդէն յայտնի էր և թէ Բ. Դուռը մեծ նեղութեան մէջ կը գտնուի. երկու օր է արդէն մեծ ջանք կընէ ատ կողմերը զօրութիւն ուղարկելու։ Արդեօք հայոց գործն ալ դեսպանաժողովի սեղանին վրա եկաւ, թէ մէկ կողմ ձգեցին։

* * *

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 17 յուլիսի։ Երէկ մարկիզ Ցզենդ ուղևորվեցաւ Ս. Պետերբուրգ։

ԿԱՆԴԱՀԱՐ, 17 յուլիսի։ Բերրայոյի վրա յարձակվող էյուբ-խան 1200 մարդ և 36 թնդանօթ ունէր։ Անգլիացիք կորցրին 2 թնդանօթներ։

ԼՕՆԴՈՆ, 17 յուլիսի։ Հաստատ լուրերից երևում է, որ անգլիական կառավարութիւնը վճռել է ամենարագ ժամանակում Հնդկաստան օգնական զօրքեր ուղարկել։

ԿԵՎԼ, 17 յուլիսի։ Երկ ուղևորվեցաւ Ս. Պետերբուրգ Բունդէ իր պաշտօնը վարելու համար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 75 կ., երկրորդ 91 ր. 87 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 92 ր. 87 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ

223 ր. 50 կ., երկրորդ 222 ր. 75 կ., առևտրական առաջին փոխառութեան առմանը արժէ 91 ր., 25 կ., երկրորդ 91 ր., 91 կ., ոսկի 7 ր. 84 կ.: Ռուսաց 1 բուրլ Լոնդոնի վրա արժէ 25 պէնս, ռուսաց 100 բուրլ Համբուրգի վրա արժէ 214 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 264 ֆրանկ: Բորսայի տրամադրութիւնը թոյլ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Մինչև այս ԱՄՍՎԱՑ ՎԵՐՋԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԱՆՈՒԹԻՒՆ Արծրունու գործերէն մէջ: Գուլպաներ (տղամարդկանց և կանանց), թաշկինակներ, պարուսմներ, պատկերներ, հոտաւէտ ջրեր, հրացաններ, ռէվոլվերներ, կողպէքներ, ոսկիներ, գանակներ, դգալներ, ցիտրոն-մարմելադա ծարաւից և այլն. այժմ ծախվում են 25%—50% էժան քան թէ ուրիշ տեղ:

7—10

Համեմատեցէք անգլիական խանութի թէյն գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ֆունտը 2 բուրլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

35—100

Նուռով մամուլի տակից գուրս կուգան Ս. Մանդինեանի հետևեալ աշխատութիւնները.

Ազգային ընտանեկան աշխարհք. 1-ն տարբաց ուսմունք, և ընթերցմունք, առաջին տպագրութեամբ:

Ազգային դիւցազնական աշխարհք. 2-դ տարբաց ուսմունք և ընթերցմունք, առաջին տպագրութեամբ:

Նահապետական աշխարհք և հայրենիք. 3-դ տարբաց ուսմունք և ընթերցմունք, երկրորդ տպագրութեամբ:

3—5



Իր յատկութիւններով մարմնի մասերի, մանաւանդ ոտքի մասերի քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳԻՄԱՆԻՆ

անունով, ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների, դեղատների և դրօգիստների մօտ Գիմաւոր դէպօ Նիւթի Հնարող Ֆարմացիի մատիարոս վ. ԿԱՐՊԻՆՍԿԻՆ դեղատան մէջն է Ջոնվում, վաբշավում, Էլէկտրաբանի փողոց, № 95: Գիմանինի մէջ եղած արկղիկը արժէ վաբշավում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.: Պէտք է ըզգուշանալ խարդախումներից:

16—25 վ. ԿՐՊԻՆՍԿԻՆ (1

ՀԱՅԱԲԱՐԻ ՍՈՒՐԻ ՄԻՆԱՍ ԵՎԵՂԵՑՈՒ ծխախոտները հրաւիրում են ցանկացողներին ներկայ գանվել այդ եկեղեցու ՕԹՄԱՆ ՀԱՆԳԻՍԻՆ, ԿԻՐԱԿԻ, յուլիսի 20-ին, առաւօտեան 10 ԺԱՄԻՆ: ԿՆՔԱՀԱՑԻ լինել ցանկացողները կարող են Վ.Ա.ՕՐՕԲ յայտնել եկեղեցու ՎԱՐՉԱՊԵՏԻՆԸ, եկեղեցու գուլիսում ԱՄԵՆԱՑՆ ՕՐ:

2—2

Քաղաքային ուսումնարանական մասնաժողովը յայտնում է, որ սեպտեմբերի 1-ից կը բացվին Թիֆլիսի մէջ Արհեստական և քաղաքային սկզբնական ուսումնարաններ: Աշակերտների ընդունելութիւնը ինչպէս առաջին, նոյնպէս և երկրորդ ուսումնարանում կը սկսվի օգոստոսի 15-ին: Ծնողները հասարակ թղթի վրա և ուսումնարանական մասնաժողովի անունով գրված, տրվում են քաղաքային վարչութեան հերթական անդամին ամենայն օր առաւօտեան 10—12 ժամը: Ծնողների հետ պէտք տրվին մկրտական և ծաղկը պատուաստելու վկայականները և որոշ նշանակված պէտք է լինեն բնակութեան տեղը և ազգությունն համարը: Սկզբնական ուսումնարանի մէջ ընդունվում են 8—14 տարեկան երեխաներ և նրանցից ոչինչ վճարութիւն չէ պահանջվում: Արհեստական ուսումնարանը մտնող երեխաների հասակը որոշվում է 12—16 տարեկան: Երեխաները ամուր կազմվածք պէտք է ունենան ու առաջին դասատուն մտնելու համար նրանցից պահանջվում է. Կրօնից-քրիստոնէական վարդապետութեան կարգաւոր հրահանգները և սրբազան պատմութիւն, ուսուցց լեզուից-կարդալ, գրել և կարգացածը պատմել, հայերի և վրացիների համար նոյնը իրանց մայրենի լեզուով, թուաբանութեանից-առաջին 4 գործողութիւնները և պարզ խնդիրների մասնաւոր լուծումը, ժամանակ, դրամ, կշռաքի և այլ չափերի գիտելիքը:

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴԵՆԵՐԻ ՀՆԳՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրոնսկի կանանց հիւանդ. Գօրալևիչ ներքին հ., Բոխենսկանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խրուրգիական և աչքերի հ., Շեսմէրօպսկի վիներական և կաշու հ., Բարայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկևիչ խրուրգական հ., Վզօրով վիներական և բոցազի հ., Լէյպ աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլադով, Լիսիցև և Վեր մի շեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցև և Բուդովսկի ներքին հ., Շեսէմրօպսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բոցազի հ., Բոտենանց կանանց և երեխաների հ., Լիսիցև և Վերմիշև ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրոնսկի կանանց հ., Մինկևիչ խրուրգական հ., Կրասնոգլադով և Լիսիցև ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շեսէմրօպսկի և Աստվածատուրով վիներական և կաշու հ., Բարայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցև և Վերմիշև ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկով վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ազքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բարաև չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւօտյան 9 ր. և երեկոյան ազքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցև:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԳՈՒՐՍ ԵԿԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մամուլի տակից գուրս եկաւ հրատարակութեամբ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Գրավաճառանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱՒԹԻՒՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԻՈՆԵԱՆՑԻ:

Ա. ՏԱՐԻ նախակիրթելիք (իբրև հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիզի հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ.

գումարով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը քաղաքական:

9—20

Աղէքսանդրապոլու երկսեռ դպրոցաց բարձր դասատուց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ռուսաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով: Ցանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձուք { Սարգիս Միրզայեանց.
Աստուր Խաչատուրեանց.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՈՎ, ԵՒ ԸՆԿ. յայտնում է այդ առևտրական տան գործերով բոլոր հետաքրքրվածներին, որ գործերի ընդարձակելու պատճառով այդ տան գլխաւոր գրասենեակը օգոստոսի 1-ից կը տեղափոխվի Դժիակլի տան վերին յարկը Դանօվսկայա փողոցի և Երիվանսկայա հրապարակի անկիւնի վրա: Տուրքերի տալու և մուտքերի ստանալու համար գրասենեակը հասարակ օրերում բաց է լինում առաւօտեան 9 ժամից մինչև 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ: Գնում է 1 և 2 փոխառութեան տոմսակներ և ծախում է նրանց այն պայմանով, որ գինը 12 ամիսների ընթացքում հատուցանվի: Այդ պայմաններով մի տոմսակ գնողը տարվա ընթացքում ման ուտի տարածից այն 20 համարներին, որոնք ցոյց են տրված վկայական մէջ չորս տերաժներին: Ցանձնարարութիւնը գնում է և ծախս մէջ մանաւանդ անձանց ամեն տեսակ անշարժ կալքեր, կամ-սիրայով ծախում է ապրանքներ և նրեթեր: Ծախում է տպված պայմանագիրներ, բնակարաններ, խանութներ և դասարկ տեղեր քրէՀով տալու համար: Տուրքերին մինչև նոր կարգադրութիւնը վճարում է.

1) Պահելու համար մինչև պահանջելը 4½%, պայմանաւոր 5½%, 2) տուրքերին 6 ամսով 5½%, 9 ամսով 6½%, 1 տարով 7½% 1½ տարով 8%, 2 տարով և աւելի 9: 3) Այդ ընկերութեան 1 կամ պայ ունեցողների մասնաւոր պայմանաւոր տուրքերին 9%: Պարտատերհոգով յայտնի անձի ապահովութեամբ փող տալու ժամանակ առնում է մի ամիս ժամանակով 10%, մի շաբաթ ժամանակով 9%:

Աւելի մանրամասն տեղեկութիւններ ցանկացողները կարող են ստանալ ամեն օր գրասենեակի կառավարչից:

4—10 (2)

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Հրացաններ, ռեվոլվերներ, դանակներ, գրիչներ, անուշահոտութիւններ, սապոն, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

20—20

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухнею, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐՋԱՑՐԱՆ, հայոց ծխական և մասնաւոր ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն տրած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ սեպտեմբերի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՑԻՉ ՊԱՇՏՕՆ ստանալ բացառապէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և գաւառներում: Տեղեկանալ ԿՈՆՏՐՈՆԱԿԱՆ կամ Էնգիներնջենացի ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

1—22

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱՑԻՆ կից կը բացվին ՍԵՆԵԱԿՆԵՐ, որոնց կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՕԿՕԼԱԴ, ԹԷՅ և պատրաստված հանքային զանազան ԲԶՐԵ:

25—40

Дозволено Цензурою 18 Іюля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона